

տէն շատ տարրեր էր, և ճշմարիտը կ'ըսեմք որ չեմք կրնար ըմբռնել թէ ինչպէս կարելի է հաստատել թէ « Տակէռի գործելու կերպերը նոյն էին Նիկեփոր Նիէբսի կերպերուն հետ, փոխելով միայն Հրէաստանի կուպրը և Լաւանդի իւղը »: Ո՛չ ահա ամենայն ինչ այս փոփոխութենէս կախուած է. կպրոյ տեղ զմանչուկ արծաթոյ փոխանակելը, երազութիւն և ապահովութիւն տուաւ գիւտոյն, մինչդեռ կուպրն ոչ զմին ունէր և ոչ զմիւսն: Իսկ մանչին գալով, իրաւ է որ Նիէբս շատ ատենէ 'ի վեր զայն կը գործածէր, բայց գործողութիւնը լմննալէն ետքը իւր նկարներուն ստուերները միայն սեցունելու համար. երբեք մտքէն չանցաւ որ զանիկայ իբրև զգայուն գոյացութիւն մը իրեն ծառայեցունէ, և աս բանիս վկայ կեցած է իւր թրղթակցութիւնը: Ընդհակառակն մանչոյ գործածութեան բոլորովին ընդդիմութիւն կը ցուցընէր, և կը ջանայր իւր ընկերին այս միտքն ալ փոխել: Գարձեալ, Տակէռի գիւտոյն մէջ սնդկի գործածութիւնը, ամենևին նմանութիւն չունի Նիէբսի ոճոյն մէջ Լաւանդի խկական իւղոյն գործածութեան հետ:

Արդ մեզի կ'երևի որ եթէ արդարացի է Նիկեփոր Նիէբսի համարել լուսանկարչական ոճոյ առաջին գիւտը, անիրաւութիւն է չորթել Տակէռէն այն գիւտերուն հեղինակութիւնը, որոնց վրայ ժամանակակցաց հիացումը իւր անունը դրոշմեր է:

ՃԱՆԱՊԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՁՈՒՄԻ ՃԻՅԷՐՃԻ ՕՂԼՈՒ ՔԱՀԱՏԱՍԻ

(Տես էրես 216)

Եղբայր, այսուհետև պատմեմք սուրբ Յորդանանոս զգևալն և զգալն մի յստ միոջէ:

Յորժամ կամենաս գնալ 'ի սուրբ Յորդանան, ծաղկազարդին օրն քիրաճիքն և Ֆէլլահներն գալ և գնալ են. ոմն դանքրմայ ձգէ փէն¹, և ոմն ախվայ. թէ այլ ուրիշ մարդու տավար չի բռնես տէյի. ապա առաւօտուն տեսանես, եղբայր, վանից դռան առջևն՝ մի կողմն Բէթլէհէմի Ֆէլլահներն, միւս կողմն շամցի զաթրճիքն. նոքա կ'ըսեն թէ մեք կու տանիմք. միւսքն կ'ըսեն թէ մեք կու տանիմք. և ես դուրս ելայ՝ զուղտն նայիլ գնացի. նա տեսնեմ որ մէկ զմէկ ինկան՝ սօփայ սօփայի. ուղտերն մէկ մէկի խառնվեցան. քարն իբրև անձրև կու թափի. եկն միտս իմ, մտայ ուղտին փորուն ներքև, հազիւ ազատեցայ. և վանից դուռն ճորով գտայ. նա տեսանեմ արապ թէլլալն եկ. ելաւ բարձր տեղ և ձայնեց. ամենեքեան լուռ կացին թէ տեսանեմք ինչ կու կանչէ. այսպէս ասաց. թէ Շամցիք տանին ըխտաւորք զջուրն, ապա թէ չի օգտէ՝ ապա Բէթլէհէմցիք տանին: Եւ Ֆէլլահներն նկուն եղեն. և ես տեսայ անդ զաթրճի մի զօրեղ, և տաւարնին լաւ. իսկոյն ձեռացն բռնեցի և ասացի, քանի տաւար ունիս. նա ասաց թէ ութը տաւար. չորսն բռնեցի, քաշեցի ներս վանքն:

Եւ հեծաք ելաք ճանապարհ զաթար զաթար. հազիւ հասաք 'ի մէկ մէյտան լեառ մի, և անդ սակաւ մի եկրէն միջ եղաք՝ մինչև յետի ըխտաւորն գայ. անտի չուեցաք. ահա կու գնամք սաւք տեղ, նեղ և լայն, դուր և փոս. եօխոշ մի վայր իջաք, մեծ

1 Գրաւական:

ևազրյ¹ մի, չատրններն տեսաք. և պայ-
րախներն 'ի մեր առաջևէ. եթէ հար-
ցանես, մինչև քսանը եօթը պայրախ
համարեցի: Սա եազրն երկըով է եղ-
բայր. և ես լուեալ էի թէ վանից չա-
տրին քով իջի. հետս ունէի փոքր չա-
տր մի, իջայ անդ. շուտով տղաքն
գուռմիջ արին, քանզի օտան էի մոռա-
ցեր: Անդ ֆէլլահներն զանութ են զուր-
միջ արեր. մէկ օխլամուր սրբրին՝
վեց փարայ առաք. — այ ախամախ. քը-
սան փարայ ուզէ, քանզի պիտոյ է. —
և մտաք 'ի մէջն, որ այն զանութնին
մեր զիմացն էր. զինչ ուզես անդ զը-
տանի: Չախ կողմն բարձր լեռներ,
բայց մի լեռն կայ քան զամենայն
բարձր է. և կայ գլուխն եկեղեցնայ
տեղ. սա է փորձութեան լեռուն, որ
ասաց սատանայ, եթէ դու ես ֆրիս-
տոս՝ ասա զի քարինքս այս հաց լինի-
ցին. և ասաց ֆրիստոս. Ոչ փորձեսցես
զտէր Աստուած քո: Եւ անդ է ջուրն՝
որ Սամիսոն իշու չէնկէով (հազար)
հոգի ջարդեց. և անդ է Զաքէի տունն:
Օրտու պազար, ո՞վ կու քնանայ. հէլէ
սակաւ մի ննջեցինք. զարթեաք, հա-
զրը եղաք. նօպէթն զարկին մէկ հեղ,
ձիանն բեռցաք երկոքում եղանակին,
հեծաք երրորդում եղանակին. պայ-
րախներն առաջևէ, ահա կու զնամք
սուրբ Յորդանան: Լուսինն տասնըհինգ
աւուր պէտիր, ինչ կ'անես զֆէնէրն
և զմիաշալան. այս ճանապարհն լայն և
հանգիստ է. յետևէ փաշին քեահեան՝
չիֆտէ մէշալէով. առաջևէ քսանըեօթը
պայրախ սէյմէնով. հետևակն ուրիշ,
ձիաւորն ուրիշ. քանզի կանուխ էր՝ ե-
րեք թէրձիմանն հետ, ապաներն 'ի վե-
րան: Անդ կայ զուժուխ մի, զմեզ անդ
արգելցին. մեք այլ վար իջաք զուժին
վերայ գնացաք: Եղբայր, այսպէս տեղս
աչքը բաց պիտի. վէ զաթրճին այլ
դուռնազ, որ Սէյտի Ահմէտ կոչուր.
քան զամէնն յառաջ կու գնայր. ան-
կարծ գալք խանիս ասելն՝ 'ի բաց կու
ցաթկես ձիուն վերայ որ մութն կու

¹ Դաշտ մարգաթեան:

բաժանի. այնպէս կու քչենք՝ որ մէկ
զիլն ինչ պիտի լինայ: Լուսացաւ. ա-
ռաջևէ գնացող պայրախներն ճկեցան,
ձախ կողմն բարձր լեռուն ելան. և
պայրախներն տնկեցին սրայով. մէհ-
տէրխանան կու ծեծեն: Գնացաք ջու-
րին եզերն, իջաք ձիուն 'ի վար. շու-
տով հանուեցաք. անդ էիր և տեսեալ
էիր. իջաք 'ի ջուրն և անդ հինգ հոգի մը-
կըրտեցի. և ապա Գարրիէլ անուն վար-
դապետ մի զիս մկրտեց. և ջուր լցաք
մաքախաւն¹ շուտով հագուեցաք ելաք
'ի ձի. այսչափ մարդս որ կայեաք մին-
չև հազար հոգիէն աւելի. կէս սահաթն
մկրտուեցանք. սամա՝ եարան գոյն
չատ, ահ չատ. լէվէնտնին չորս կողմէն
չալախ թրով՝ տէյինտի թէզ եղիք, ա-
սելով, հազիւ ճանապարհ ելաք:

Այս սուրբ Յորդանան շատ լայն չէ,
կարի խոր է. և ջրին վազելն պտոյտ
առնելով է. ներքնագոյն կու վազէ,
քաղցրահամ, խմելով չես զովանար:
Ի յետ դառնալն՝ երկու տաւշան ել դէ-
մերնիս, զարկին սպանեցին. երեք էր,
մինն զայլ էր՝ փախեաւ. և յետ նորա
փաշին քեահեան անցաւ առաջ ըշտա-
պով. չատրը զարկին ճանապարհին
բերանն. նախ ֆռէնկն էանց, և ապա
հոռոմն, ապա թէ մեք. չորս զուռ մէկ
թիշրակ² տուր և անցիր: Դարձեալ ե-
կաք 'ի տեղերնիս կրկին երկրով. շու-
տով չատրն մտաք. վանից չատրնե-
րուն մատէ միայն մեր չատրն. ամե-
նեքեան մաթ մնացին՝ թէ այս տեղս
այլ թէտարիքով ես: Եղբայր, շող և
տաք որ չեմ կրնար պատմէր. մինչև 'ի
յետինք այնչափ ջուր խըմեցինք՝ որ ա-
սելու չէ. բայց սաղ ջուր, իսկի ինձիթ-
միջ չարաւ. այս այն ջուրն է՝ որ Եղիսէ
աւրհնեաց: Ինչ և իցէ՝ երեկոյ եզև.
չորս կողմէն կրակ տուին հառըլ հա-
ռըլ կու վառի. և փոքր խօսք լսեցի թէ
քեահեան պիտի չուէ. զիրա քովս
տասը քէսէ ըստկէն և ել եղև, նորանից
կու վախէ. կամ թէ ֆէլլահն պիտի

¹ Կաշայ ջրաման:

² Երրորդ մաս:

կոխէ . զատոնք լսեցի կամաց մի , ձայն չի հանեցի գնացի չատըրն աւերեցի . զուրճին մէջն դրի , միւս կողմն եօր . զանն և գետ Յորդանան 'ի ջուրն . և հա . գայ ճիզմէս և նատար : Ոմանք ասացին թէ չորրորդում սահաթին կ'ենեմք . իշտէ այս գիշերն խակի չի քնացաք մին . չև սահաթն հինգն գնաց հեծաք . բայց առաջի գիշերվան պէս նօպէթ չի չա . լէցին . չորս կողմն կրակն բազմացաւ . քըչեցին այն եազըն . եկաք դար մի վեր . այնպէս կու քչեք՝ որ գիտես թէ փախ են ձգեր : իշտէ այս տեղս զմա . թարան այն անիծեալ ֆէլլահն գող . ցաւ . հարամ լինա : Հագիւ առաջ ան . ցաք և ազատեցաք 'ի յղտիցն , մինչև 'ի յարեւմադուն եկաք հասար 'ի Բեթա . նիեայ . և անտի սորայ գիւղին պատին քովով կու անցանես . ապա Համբար . ձումն կու երեի . դէպի փրկչի դուն կանգներ են 'ի մեր միաբանից . ձայ . նեն , թէ այս կողմն եկէք . եայ եղբայր , քաղաքացիք բերդին վերայ ելած նըս . տած , զմեզ թամաշա կ'ընեն : Եկաք փրկչի դուն . մէկ մէկ փարան կու տաս մանես քաղաքն , և զնաս 'ի սուրբ Յակոբ : Բայց զայս ևս ծանիք սիրելիք . որ ծաղկազարդին երկու երեք օր յա . ուաջ գիւղօրէից Արապներ կու գան սուրբ Երուսաղէմ . նոքա այլ ուխտ կ'երթան հազրէթի մուսա կ'ըսեն . անդ գնան ութը օր . 'ի մեր գնալն սուրբ Յորդանան՝ նոքա աջ կողմն կու ճկին դէպի Սողոմ կու գնան . որ յետ դառ . նալն մեր Յորդանանու հետ՝ պարա . պար կու գան . նոքա սուրբ Աստուած . ածնայ դունէն կու մտանեն . 'ի մեր գալն , եղբայր , դեռես նոքայ չէին ե . կեալ , զիրա մեք կանուխ շարժեցաք : Այն սուրբ Աստուածածնայ դուանն գրտի դիհն սուրբ Ստեփանոսի քար . կոծման տեղացն վերև մեծ լեառ մի է . անդ նստեալ են քաղաքացոց տաճկի կանայք . սուտ չի խօսիմք . զիրա հաճի եմք . մինչև երեք հազար կին . առաջնև և յետոյսն այր մարդ , նոյնպէս հա . մար չի դար . զմեզ և զնոքա թամաշա կ'ընեն . հէմէն մահանա մի կ'ուզեն որ

դուրս թափին . այր և կին ծեր և տը . զայ կերակրով և այլ ամենայն կերպիւ կերպիւ շէյթրով , որ այլում տեղ գը . րեալ կայ . այս այսպէս : Ի մեր գնալն սուրբ Յորդանն . տես թէ միւսեյիմըն ինչ է արեր . որչափ տուն կայ՝ կու կոխէ , կամ Դաւթայ մարգարէին սա . րայէն քսանըութը հողի կու հանէ , ընդ ամենն վատսուն հողի , որ զինքն պահեալ էր . ձեռք ինկածն հինգ դու . ոուչ և կէս առեր . սանքի կօմրիւկէն ըռզակ որ փախցնէ ոմն ձեռք որ անկա . նի երկու կօմրիւկ կու առնեն . նոյնպէս սոցա չորս դուուչ մէկ թիւթին տեղն . ոմանց վեց դուուչ առին , ոմանց հինգ և կէս դուուչ : Եայ եղբայր , 'ի ճանա . պարհին գալն՝ ձիուն վերայ կու քըրա . նիս . և այնչափ տաւարին ոտաց հոս . մունքն երես 'ի վեր կու դայ , որ մօ . ըուք և երեսի վերայ թօզն կու նստի . դու ևս ֆէլլահ կու դառնաս . շուտով օտատ կու գաս լուացվիս և հանգստա . նաս : Եթէ կամիս մէկ քիչ քնացիր . զիրա քընհատ ես և խոնճած : Այսպան առ այս սուրբ Յորդանանու բաւէ :

Սա որ կայ կաւիւնք պատմեյ պիշր . քիւն¹ և Դաւթայ մարգարէիս պա . շատն մի ըստ միոցէ :

Յորժամ գնան ըխտաւորքն մօտե . նան հայր Արրահամու դունն , աջ կողմն բաց ես խոր , զէթունի ծառք համարք չի դար . պիւրքէ մի մեծ այս կողմն է , և այս պիւրքէին զպատճառն ասեմ ըսկիզբէն : Յորժամ գնաց կոս . տանդիանոս ունէր հետն զհայրապետն Սեղբեստրոս , և թագաւորն Տրդատ ունէր հետ զսուրբ Գրիգոր Լուսաւո . ըիչ . ապա վիճակ ձգեցին թէ ո՞րն շինէ սուրբ Յարութիւն , կամ ո՞րն շինէ ըղ . սուրբ Մնունդ . և ել վիճակ Տրդատու թէ սուրբ Յարութիւնն շինէ . և ապա զմտաւ ածեալ սուրբ Գրիգոր Լուսա . ւորիչն և ասաց , որդեակ իմ Տրդատ , պարտ է քեզ ասել կոստանդիանու

1 Ձրի ճամբայ :

Թէ քո հրամանքդ շինէ զսուրբ Յարու-
թիւնն, քանզի նա մեծ է քան զքեզ .
և նա յանձն առեալ զնաց առ կոս-
տանդիանոս և ասաց . Հայր իմ, ինձ
չեղաւ վիճակն սուրբ Յարութեան . և
նա ասաց նմա . քո հրամանքդ շինեա :
Եւ յորժամ լուաւ զայս խօսքն ասաց
Թէ ս՛վ ետուր զայս խրատն քեզ . և
Տրդատ ասաց՝ հայրն իմ սուրբն Գրի-
գոր Լուսաւորիչ . և ասաց Թէ բարի է :
Սոքա ունէին վարպետք հիւսանք . մեծ
խորհուրդ արաւ ՚ի մտի իւրում, և շի-
նեաց նախ և առաջ զայս մեծ պիւր-
քէն . քաղաքէն դուրս խոր, և արար
ճանապարհ գետնի ներքեւէն մինչև քա-
ղաքին մէջն . և անդ ևս շինեաց պիւրքէ
մի այլ . դրսի պիւրքէէն ներսի պիւր-
քէն դայր ջուրն . և անտի շինեաց ճա-
նապարհ սուրբ Յարութեան մէջն փոքր
հաւուղ մի . որ վարդապետք և ըռէնչ-
պէրք անտի առնէին զջուրն . բոլոր
տարի մի ջուր ժողովեաց . և ամենայն
երբ պիտոյից հազր առաւ . ապա սկը-
սաւ հիմն արկանել :

Եւ կամիմք մտանել դուռն քաղա-
քին . կու իջանես ՚ի գրաստէն և կայ
ձախ կողմն պողչայ մի որ ժամանա-
կաւ բաղանիս է եղեր, և կին Ուրիեայի
անդ լուացվեր . և աջ կողմն սարայն
Դաւթայ մարգարէին . և կայ անդ փէն-
ճէրէ մի . անտի տեսաւ զկին Ուրիեայի
Բերսաբէ, և ցանկացաւ : Եւ աջ կողմն
դառնաս, և է բերդին դուռն . ներս
մտնելն երկու կողմն փէքէ, և այս
դուռն երկաթ մամուր . այլ ներս կ'եր-
թաս մեծ դուռ մի այլ փայտէ վերան
քեավկիր քէմէրով . և աջ կողմն կայ
մէրտիվէն մի քսանըութը ոտք, կ'ելա-
նես վեր զնաս ճուկ ճանապարհներով
դուռ մի փոքր փայտէ, անդ կայ չորս
հինգ օտայ . և մին օտային ճակատն
փէնճրէ մի որ կու հայի ճանապարհին
վերայ . և աստ նստէր մարգարէն Դա-
ւիթ, և արմունկն փէնճէրէին մէջ տեղն
կռթնէր, սաղմոս ասէր . և արմնկին
տեղն փոսցեր ձեռաց մի զատար¹ :

¹ Չափ :

Ուխտ արէ և տուր երկու փարան եղի
ըստակ : Ելանես դուրս կայ անդ նեղ
մերտիվէն մի տասուերկու ոտք . կ'ելա-
նես վեր փոքր սիրուն չորս քօչէ օտայ
մի, ունի երկու տախտակ փէնճէրէ ,
որ անդ նստեալ քնարիւ զսաղմոսն եր-
գեր է . և այժմուս նօպէթճիք զուռնա
տաւուլն անդ չարեն . և իջանելն մէր-
տիվէնն ՚ի վայր՝ կայ անդ չորս թօփ .
իջաք դէպ ՚ի վար, շատ զնացաք մութ
տեղով . և անդ մեծ տեղ մի և մէջ
տեղն հոր մի, և տեսաք սախան ջուր
քաշեց, և մեք խմեցաք ցուրտ և անու-
շահամ . և մեզ պատմեց ջուրջ ածողն՝
Թէ այս ջուրս հայր Աբրահամու կու
գայ . եթէ այս քաղքիս ջուրն հատնի՝
սա կու զովացրնէ այնչափ առատ է :
Ելաք անտի գնացաք բանտն , և բա-
ցեալ զդուռն ներս մտաք մութ . և կայր
անդ հինգ ֆէլլահ ոտքերնին զատա-
նայ . և վզերնին զէնճիլ հաստ և փայ-
լուն . երկու խաթ է դուռն . ներսի
խաթն՝ հաստ փայտ վերան երկաթ
ղափլր, տասներվեց աչք, և երեք կող-
մէն հաստ զէնճիլ . և միւս դուռն՝ զուտր
երկաթ երեսունըվեց աչք և երեք կող-
մէն հաստ զէնճիլ . և մինն միւսի վրայ
կու կղպէ : Եւ կայ սորայ քով օտայ մի
որ պահապանք անդ նստին և պառ-
կին . և անտի ելաք ՚ի Պէտէնն¹ . քսա-
նըչորս ոտք մէրտիվէն . աստ կու կե-
նան տնվորնին . և անտի այլ առաջ
կայ նեղ մէրտիւէն մի տասներչորս ոտք
որ այլ վեր կու ելանես, որ չորս կողմն
երուսաղէմի կու տեսանես . և անտի
իջաք ՚ի վայր և ելաք ՚ի դուրս . կայ
դրան դիմաց երեք պօյլու թօփ, և զա-
րապա տեղ . և աստ կայ ջուրհակի մե-
ծամեծ օտաներ : Անցիր առջևէ և զնա
ուղիդ . ձախ կողմն թումայի առաքե-
լոյն վանքն, որ ֆրիստոս աստ ձախեց
զնա . և մեծ քէմէր մի՝ որ սեղանա-
տունն սորա վերան է . յառաջ երթաս
սուրբ Յակոբայ դրան վերան քէմէր, և
մէջ տեղն նօմոս թաղաւորական, և
դուռն երկաթ մամուր . օրթայ տեղն

¹ Պարխա :

փոքր դուռ մի, անճախ էջ մի առանց բեռ կու մտանէ. և ունի զոց ութը. և լիակատարն յայլում տեղ գրեալ կայ: Եւ յորժամ շինեաց Կոստանդիանոս զսուրբ Յարութիւնն, յետ նորա շինեաց զսուրբ Յակոբ, և ետուր սուրբ Լուսաւորչի փէշքէջ 'ի պատիւ այնր որ ասաց Տրդատայ, Երթ գնա ասա թաղաւորին՝ թէ դու շինեա զսուրբ Յարութիւնն. նորա համար պատիւ ետ սուրբ Յակոբ Լուսաւորչի. ամէն:

Կը շարունակուի:

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆՔ

Գաղչի Բողոքներ: — Դրոբլոն՝ Իբրև նախագահ ծերակուտին և Իբրև ծերակուտի անդամ, նախագահ Գատաստանարանին (Cours de Cassation) և Ուսումնարանին անդամակից կ'ընդունի, 196,500 Ֆր. առանց հաշուելու բնակութիւնն և ուրիշ շահերը: Նիէլ մարաջախտը Իբրև ծերակուտի անդամ, մարաջախտ, պատուոյ լէգէտնին մեծ խաչ պատուանշանը կրող և պաշտօնակալ պատերազմի 193,000 Ֆր: Մաք-Մահոն մարաջախտն՝ ընդհանուր կուսակալ Ալճերիոյ Ֆր. 188,000: Պարակէտ-Իլլիէ, Ռընեոյ տը Սէն-Ժան տ'Անժէլի, Քանրոպէր և Պազէն՝ Իւրաքանչիւրն առանձին առանձին 163,000 Ֆր: Վայլեան մարաջախտն՝ Իբրև պաշտօնակալ կայսերական տան և մեծ մարաջախտ Պալատան 229,000 Ֆր: Մովային պաշտօնակալը Ռիկոյ տը Ժընուլի ծովապետը 163,000 Ֆր: Պարոշ և Մաներ պաշտօնակալքն Իւրաքանչիւրը 130,000 Ֆր. Բերսիներ, Տրուէն տը Լիւիս, և Լաւալէգ՝ Իբրև անդամք գաղտնի խորհրդոյ Իւրաքանչիւրը 105,000 Ֆր: Կոյեոն զօրավարը 105,000 Ֆր: Մոնդոպան զօրավարը 148,000 Ֆր: Ֆլէորի զօրավարը 119,000 Ֆր: Էտկար Նէյ 118,000 Ֆր:

Խորաթիան ծովա: — Ըստ գրեցոյ Moniteur Universel լրագրին ներքնածովային պարաններ ձգելու համար՝ գնտաչափութեամբ եղած փորձերով ծովուն այլ և այլ կողմեր ունեցած խորու-

թիւնն գտնուեր է. — ընդ մէջ Շուէտի և Գերմանիոյ՝ Պալչիկ ծովուն խորութիւնն է 40 մեգր. Ադրիականն ընդ մէջ Վենետիոյ և Իրիէստի 42. Մանիքա՝ 100: Իուլանտայի ծովուն հարաւ-արեւմտեան կողմը 660. Միջերկրականը՝ Ճիպիլգէրայի արեւելեան կողմը 100. Սպանիոյ ծովեզերքն 2,000. Հոռն և Բարեյուսոյ սարերուն ծովերը 5,000 մեգր:

Նոր Տագնիսահանգ: — Pays լրագրին մէջ կը կարդանք որ Սաքսոնիոյ մէջ մագնիսացեալ լեռ մը գտնուեր է, որուն մէջէն մագնիսեղէն երկաթի երակ մը կ'անցնի. քանի մը հարիւրամեգր թանձրութեամբ: Ինչուան հիմա ճանչցուածն էրուն մէջ ամենէն աւելի հարուստ մագնիսահանգն է, յորմէ արդէն իսկ հիմակուրնէ մեծահատոր զանգուածներ դուրս հանուած են: Իր մէջն էլ զած մագնիսը բաւական է բոլոր աշխարհիս համար: Պ. Տուր (Dower) պերլինցի բնագէտը այս հանքէն կտոր մը ունեցեր է որ 30 հազարակրամ կը կշռէ:

Մէտել-Ռիան 'ի Լոնդրա: — Լոնտրայի վիճակագրութիւնը կը հաշուէր անցեալ տարի 3,082,372 բնակիչ, 340,917 տանց մէջ, 122 քառ. մղոն տարածութեամբ. և նոյն տարուան մեռելութիւնը սակաւութիւ է համեմատութեամբ նախընթաց տարիներուն. միջին հաշուով ըլլալով 23 առ 100, մինչքեռ 1866ին եղաւ 26 1/2 առ 100: Հիւանդութեանց մէջ սաստիկ կտորած ընտղն եղաւ ծաղկախտը, որով 13,032 անձինք մեռան: Ուրիշ հիւանդութիւն մ' ալ, ծիրական ըսուած ախտը 8817 տղայոց մահ պատճառեց:

Առածք Սկիպտիացոց

Ամեն ծառի հարուած տուողը՝ մէկն ալ չկործանէր: Աւելի աղէկ է տաքցընող քիչ կրակը՝ քան կիզանող մեծ հուրը: Լաւագոյն է սատանան անէն դուրս բռնել՝ քան դուրս ընել ջանալ: Ո՛վ որ երբեք նեղութիւն քաշել չուզէր՝ բնաբարեաց արժանի չէ: Լաւագոյն է որ մարդ մը շատ քիչ նորալուր ունենայ, քան թէ իր հօրը կախուած ըլլալը պատմէ: